

ՅՈՒ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԳԵՈՐԳ ԽՈՒԲՈՎԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԵՐԿՐ ԻԲՐԵՎ XVIII—XIX ԳԱՐԵՐԻ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԻՆԱԳՐՅՈՒՐ

XVIII—XIX դարերի հայ հասարակական-քաղաքական ու մշակութային գործիչ Գեորգ Մելիքիսեղեկյան Խուրով-Խաղբակյան-Պառչյան-Արշակունի Երևանցին (սա նրա ինքնանվանումն է), որ Հայաստանը Ռուսաստանի օգնությամբ թուրք-պարսկական լծից ազատագրելու գաղափարի ու գործի ամենաեռանդուն մարտիկներից մեկն էր, իր անձով և գործով հայագիտության ուշադրությունը գրավել է դեռևս անցյալ դարի 60-ական թվականներին<sup>1</sup>։

Մնվել է 1764 թ.<sup>2</sup> Երևանում, 1771—1780 թթ. իր հորեղբայր Սիմեոն Երեվանցի կաթողիկոսի (1763—1780) հսկողության տակ սովորել է էջմիածնում։ Հորեղբոր մահից հետո երկու տարի ևս մնացել է այնտեղ, ապա՝ դուրս եկել, մասնակցել Երևանի հայ հասարակության բանակցություններին նախ Վրաստանի, ապա՝ Ռուսաստանի պետական գործիչների հետ։ Ավելի ուշ դարձել է Երևանի Մահմադ խանի խորհրդատուն և միջնորդը՝ Ատրպատականում գրտնրվող ռուսական զորքի հրամանատար Կորսակովի հետ ունեցած բանակցություններում։

1803 թ. գններալ Յիցիանովի զորքերի կողմից Երևանը պաշարելու նախօրյակին պարսիկները Խուրովին կասկածում են լրտեսության մեջ, իսկ երբ Յիցիանովի հարձակման ժամանակ հայ բնակչությունը մեծապես օգնում էր ռուսական բանակին, Խուրովն էլ իր հերթին անձամբ մասնակցում է այդ բանակի պարենավորմանը։ Պարսիկները, ձգտելով ամեն կերպ վնասել ռուս-

1 Տե՛ս «Արարատ», 1868, էջ 115, ուր տպագրված է Խուրովի «Երգարան երգեցիկ մանգանց և յորդորակ սիրահար զեռավարժից» ժողովածուի (Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր № 491) № Իէ երգը՝ «Ողբ Գեորգեայ իշխանի Խուրով Մելիքիսեղեկեան ի վրդովմունս Հայաստանի սղբալով սղեալ»։ Նույն տեղում «Արարատը» խոստանում է ապագայում տպագրել «Երգարանից» այլ տաղեր ևս և՛ հեղինակի «Ձեկուցումը», բայց խոստումը մնացել է անկատար։ Այդ երգը տպագրվել է նաև՝ «Գալիթ-Բեզ, Ընտիր պատմություն Գալիթ-Բեզին և պատերազմաց Հայոցն Խախանու», Վաղարշապատ, 1871, էջ 87—88։

2 Մենդլան և մահվան թվականները Խուրովի ինքնակենսագրության և Մառաշիությունների ցուցակի տվյալների համաձայն ճշգրտել է բանասիրական գիտությունների դոկտոր Պ. Հակոբյանը («Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալու արձագանքները հայ գրականության մեջ», Երևան, 1978, էջ 208), իսկ կենսագրական մյուս տեղեկություններն առաջին անգամ շարադրված են Լ. Մելիքսեթ-Քեկի կողմից. «Գեորգ Մելիքիսեղեկյան Խուրով (նյութեր և նոթեր)», Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ, 1950, №№ 1—2, էջ 55—84 (այսուհետև՝ Լ. Մելիքսեթ-Քեկ, Գեորգ Խուրով) և «Գեորգ Մելիքիսեղեկյան Խուրովը (1762—1829)» և նրա «Գալազանազրքի» ակրոստիքոսները», «Բանբեր Հայաստանի արխիվներին», 1963, № 2, էջ 101—110։

վաճան» հայերին, ի թիվս այլ բարբարոսությունների, այրում են նաև Խուրովի այգիներն ու դուշբը: Նա ստիպված է լինում ոչ այնքան դյուրին եղանակով, ընտանիքը տեղափոխել Քիֆլիս: 1805 թ. գեկտեմբերին ուղևորվում է «օրհնյալ Ռուսաստան» և հաստատվում Մոզդոկում: 1810 թ. Մոզդոկից գրելում է Պետերբուրգ, 1811 թ. այստեղ ավարտում «1178—1809 թթ. Հայաստանի արժանահիշատակ անցքերի նկարագրությունը», թարգմանել տալիս Հովսեփ Հովհաննիսյանին և ուսերեն լեզվով տպագրում նրա իսկ տպարանում<sup>3</sup>:

1814 թ. Պետերբուրգում ավարտել է 9 տարի առաջ սկսած<sup>4</sup> «Գաւաղանագիրք Հայոց ազգի» աշխատությունը և նույն շրջանում ձգտել հասնել ուսական պետական մարմինների կողմից իր իշխանական տիտղոսի ճանաչմանը (այս նպատակն իրականացել է 1816 թ. հոկտեմբերի 30-ին): 1814 թ. գնացել է Ղզլար, դարձել տեղի հայկական դավառական դպրոցի ուսուցիչ, 1827 կամ 1828 թթ.<sup>5</sup> հրավիրվել է Աստրախան և, Սերովբե Պատկանյանից հետո, ստանձնել Աղաբարյան վարժարանի տեսչությունը: 1830 թ. հետո նրա մասին տեղեկությունները պակասում են:

Ռուսասեր և Ռուսական կաշարության շնորհիվ Հայաստանը թուրքպարսկական լծից ազատագրված տեսնել փափագող այս հեռաբրբիր գործչի անձի և գրական ժառանգության մասին հայագիտության մեջ եղած առաջին խոսքի հեղինակը Գյուտ Աղանյանցն է: «Գիւան Հայոց պատմութեան» շարքի մի քանի գրքերում նա մեծապես օգտագործել է Խուրովի երկասիրությունները: Սիմեոն Երևանցու կենսագրությունը շարադրելիս անգրադարձել է նրա ուսերեն գրքին, հիշատակել էջմիածնի մատենադարանում պահվող նրա «Երգարան երգեցիկ մանկանց և յորդորակ սիրահար դեռավարժից» ժողովածուն և քննել Խուրովի կազմած սեփական տոհմագրական աղյուսակը, ըստ որի նա իրեն համարում է Պոռչյան իշխանական տան շառավիղը<sup>6</sup>: Նույն հատորի գրականության ցանկում, Խուրովի ուսերեն գործից բացի, Աղանյանցը հիշատակել է նաև անհեղինակ մի աշխատության անուն. «Պատմութիւն ժամանակագրական դկաթուղիկոսաց ցվերջին աւուրս եփրեմայ. սկսեալ ի Ղաղարէ վերջնոյ (գրչագիր Մատենադարանի Սրբոյ էջմիածնի)»<sup>7</sup>: Այս ձևագրին ավելի հանգամանորեն կանդրադառնանք ստորև:

<sup>3</sup> Описание достопамятных происшествий в Армении, случившихся в последние тридцать лет, т. е. от патриаршества Симеонова (1778 г.) до 1809 года. Сочинение князя Егора Хубова. С армянского перевел Армянской церкви архидиакон Иосиф Иоаннесов. Печатано на основании Высочайшего повеления в Санкт-Петербурге, 1811 г.

<sup>4</sup> Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարանի զիվան, Լազարյանների թողոն, թղթապանակ 104, գործ 7, վավ. 51 և 132:

<sup>5</sup> Լ. Մելիքսեթ-Քեկի ուսումնասիրած փաստաթղթերի համաձայն Խուրովը Աստրախան է գնացել 1827 թվականին, իսկ 1829 թ. հուլիսի 14-ին Լազարյաններին դրած նամակներում Խուրովը հայտնում է, որ «յանցեալ ամն» է հրավիրվել Աստրախան (տե՛ս Լազարյանների թողոն, թղթ. 104, գործ 7, վավ. 51 և 132):

<sup>6</sup> Տե՛ս Գիւան Հայոց պատմութեան, զիրք Գ. Սիմեոն կաթուղիկոսի Յիշատակարանը, կենսագրութեամբ և յանելուածներով ու ծանօթութիւններով հրատարակեց Գիւտ քահանայ Աղանեանց, Քիֆլիս, 1894, էջ ԽԳ—ԿԱ (այսուհետև՝ Գիւան):

<sup>7</sup> Գիւան, Գ, էջ ԼԲ: Սիմեոն Երևանցի կաթուղիկոսի կենսագրության շարադրանքի ընթացքում Աղանյանցն ազատորեն քաղումներ է արել այս ձևագրից, բայց միայն երկու դեպքում է մատնացույց արել իր աղբյուրը: Տե՛ս Գիւան, Գ, էջ ԿԵ և ԺԻԶ:

1945 թ. լ. Մելիքսեթ-Բեկը Վրաստանի կենտրոնական պատմական արխիվի համար ձեռք է բերել Խուբովի «Գաւազանագրքի» մի օրինակ<sup>8</sup>: Այդ առիթով փնտրել և նույն արխիվում գտել է նրան վերաբերող 6 փաստաթուղթ-դրանց և «Գաւազանագրքի» ու ուսուցիչներին գրքույկի տվյալներն ի մի գումարելով, նա առաջին անգամ հյուսել է Խուբովի կենսագրութունը, բնութագրել նրա պատմագիտական և բանաստեղծական ժառանգութունը<sup>9</sup>:

1963 թ. լ. Մելիքսեթ-Բեկը հրատարակել է «Գաւազանագրքի» այդ օրինակում եղած 76 երկտող (կամ 38 քառատող) ունեցող մի ձոն, որի սկզբնատառերը հոգում են. «Աշխատասիրեալ ի հայկազուն Գէորգ Մելիքսեղեկեան Խուբով Խաղբակեան յիշխանահազն Արշակեանա է»: Նույն առիթն օգտագործելով հրատարակել է Եփրեմ կաթողիկոսի կնիքով ու 12 հոգևոր և աշխարհիկ անձանց ստորագրությամբ վավերացված՝ Խուբովի իշխանական կոչումը հաստատող մի փաստաթուղթ: Այս հրատարակումներին, որպես առաջաբան, լ. Մելիքսեթ-Բեկը կցել է 1950 թ. իր հյուսած Խուբովի կենսագրության մեկ էջանոց համառոտումը<sup>10</sup>:

Տեղին է նկատել, որ Մաշտոցյան Մատենադարանի № 3755 գրչագրում (գրված 1829 թ. Աստրախանում), որտեղ Գավազանագրքի բնագիրն ունի ուսուցիչներն զուգահեռ թարգմանութուն, հիշյալ ձոնը շարունակված է և հասցրված 108 երկտողի (կամ 54 քառատողի): Ծայրակապն այստեղ շարունակվում է հետևյալ բառերով. «...որ և մեծազննին յիշատակարան է բանս այս»<sup>11</sup>: № 3755 ձեռագիրը պետք է համարել հեղինակի վերջնական խմբագրման ենթարկած օրինակը, քանի որ Խուբովն այն ուղարկել է Լազարյաններին՝ տպագրել տալու խնդրանքով: Լ. Մելիքսեթ-Բեկն այս ձեռագրին ծանոթ չի եղել, որովհետև մինչև 1950-ական թվականները այն դեռևս գտնվել է Մատենադարանի արխիվային բաժնում և որպես առանձին ձեռագիր պահպանված չի եղել:

Խուբովին անդրադարձած հաջորդ բանասերը Հարութուն Քյուրտյանն է: 1954 թ. կոնդոնում «Անզլիայի և Իսլանդիայի արքունի Ասիական ընկերության» կենտրոնատեղիի գրադարանում նրան ցույց են տվել «սուկեղրուադ կարմիր կաշեկողքով հատոր մըն, որուն կոնակը երկաթագիր դրոշմուած էր. «Գաւազանագիրք թագաւորացն Հայոց ի բնեազ Խուբովէ»: Քյուրտյանը ծանոթ չի եղել Մելիքսեթ-Բեկի հոգվածին, բնականաբար՝ նաև Մաշտոցի անվան Մատենադարանի № 3755 գրչագրին, ուստի իր տեսած օրինակը համարել է միակը: Նա տպագրել է «Գաւազանագրքի» մյուս օրինակներում բացակայող և միայն այստեղ պահպանված «Առ նորուն արքայական բարձութին աղէրս» խորագրով 18 երկտողանոց մի ձոն, որի սկզբնատառերը, երկու իրարից առանձին շարքերով, ծայրակապի կարգով հոգում են. «Առ Գիորգ տիեզերակալդ», իսկ վերջնատառերը, նույն կարգով՝ «Բ Գէորգ իշխան է է

8 Ձեռագրի նկարագրութունը տե՛ս լ. Մելիքսեթ-Բեկ, Ցուցակ հայերեն ձեռագրաց Վրաստանի կենտրոնական պատմական արխիվի, «Բանբեր Մատենադարանի», № 4, Երևան, 1958, էջ 414—415, ձեռ. № 49 (= 705), այժմ՝ ՄՄ, № 10359:

9 Լ. Մելիքսեթ-Բեկ, Գեորգ Խուբով, էջ 55—84:

10 Լ. Մելիքսեթ-Բեկ, Գեորգ Մելիքսեղեկյան Խուբովը (1762—1829) և նրա «Գավազանագրքի» աղբյուրները, ԲՀԱ, 1963, № 2, էջ 101—110:

11 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 3755, էջ 12բ—119բ:

խնդիր»։ Լ. Քյուրտյանը կարծում է, որ Խուրովն այս գործը նվիրել է Վրաց վերջին թագավոր, Հերակլի որդի Գևորգին, որը գահ բարձրացավ 1798 թ.<sup>12</sup>։

Ուշագրավ է այս ձեռագրի վրա եղած անդրերեն մակագրությունը. «Presented to the Oriental Translation Com. by the Author Prince Hubboff» — Նուիրեալ Արևելեան թարգմանութեանց ընկերութեան՝ հեղինակէն. իշխան Խուրով»։ Ի դեպ, Խուրովը 1829 թ. հոկտեմբերի 7-ին, Ալեքսանդր Հումբոլդտի միջոցով, իր հորեղբայր Սիմեոն Երևանցուց նվեր ստացած երեք ձեռագիր (1462, 1620 և 1698 թվականներին գրված ժողովածուներ) Աստրախանում նվիրել է Բեռլինի արքայական գրադարանին<sup>13</sup>։

Վերջերս լույս տեսավ Պ. Հակոբյանի կազմած «Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալու արձագանքները հայ գրականության մեջ» ժողովածուն, որտեղ Խուրովի «Երգարան մանկանց» ժողովածուից տպագրվել են «Վասն սրախողխող առմանն Գանձակու» և «Վասն հանդիսավհնութեան քաջայաղթ մեծ զօրապետ Ալէքսէյ Պետրովիչ Երմօլովին ներբողեալ» երգերը<sup>14</sup>։ Հակոբյանը ձեռքի տակ ունեցել է Խուրովի «Ինքնակենսագրութիւնն» ու «Մառայացուցակը» (որոնց պահպանման վայրը, սակայն, չի հայտնել), և այդ փաստաթղթերի շնորհիվ ճշգրտել է մեր հեղինակի ծննդյան և մահվան թվականները՝ 1764—1830 թթ. (լ. Մելիքսեթ-Բեկի 1762—1829 թթ. փոխարեն)<sup>14ա</sup>։ Մելիքսեթ-Բեկին հայտնի «Երգարանից», «Գաւազանագրքից» և ուսերեն գրքույկից բացի, Պ. Հակոբյանը նկատել է, որ Աղանյանցի «Գիւանի» որոշ հատորներում հղումներ և քաղումներ կան նաև Խուրովի մի այլ գործից. «Պատմութիւն ժամանակագրութեան կաթողիկոսաց ցվերջին աւուրս Եփրեմայ կաթողիկոսի» և կարծում է, որ սա ուսերեն գրքույկի «մշակված ու ընդարձակված տարբերակն է թերևս, և որի ձեռագիրը մինչև հեղափոխութիւնը պատկանելիս (թե՛ պահվելիս) է եղել Գյուտ Աղանյանցի մատենագրանում։ Որտե՞ղ է պահվում ներկայումս, չենք պարզել»<sup>15</sup>։

«Գիւանի» Ա.—Բ հատորները պատրաստելիս Գ. Աղանյանցը ձեռքի տակ չի ունեցել Խուրովի վերահիշյալ երկը, շնայած այն մեծապես օգտակար կարող էր լինել իր աշխատության համար։ Երկրորդ գրքի («Սիմեոն կաթողիկոսի Յիշատակարանը») գրականության ցանկում նշանակված է. «Պատմութիւն ժամանակագրական զկաթողիկոսաց ցվերջին աւուրս Եփրեմայ, սկսեալ ի Ղազարէ վերջնոյ», իսկ կողքը, փակագծերում տեղեկություն է տրված, որ դա էջմիածնի մատենագրանում պահվող գրչագիր է<sup>16</sup>։ Չնայած հատորի առաջարանում այս ձեռագրից քաղումներն ու նրա օգտագործում-

<sup>12</sup> Յ. Քիրտեան, նորագիտ նիւթեր Պոռշեանց կամ Խաղրակեանց մասին, «Բազմավէպ», 1956, էջ 101—106։

<sup>13</sup> Տե՛ս Եփրոզս Քարամեանց, Յուցակ Պեռլինի արքայական մատենագրանի հայ ձեռագրաց, «Բազմավէպ», 1886, էջ 185։ Նաև՝ Verzeichniss der Armenischen Handschriften der Königlighen Bibliothec zu Berlin, von dr. N. Karamianz, zehnter Band, Berlin, 1888, էջ 15—16, 55—56, 81, 85։

<sup>14</sup> Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալու արձագանքները հայ գրականության մեջ, բնագրերի պատրաստումը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Պ. Հ. Հակոբյանի, Երևան, 1978, էջ 8—10 (այսուհետև՝ Պ. Հակոբյան)։

<sup>14ա</sup> Մեղ անհայտ աղբյուրի չիման վրա Լ. Խաչատրյանը Խուրովի կյանքի տևողությունը նշանակել է «1762—1833-ից հետո», ավելացնելով նաև, թե 1833 թ. նա վերագրվել է Ղզարտն՝ «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 5, Երևան, 1979, էջ 97։

<sup>15</sup> Պ. Հակոբյան, էջ 208։

<sup>16</sup> Գիւան, Գ, էջ 18։

ները բազմաթիվ են, բայց տողատակերում գործը հիշատակված է ընդամենը երկու անգամ<sup>17</sup>:

Իսկ նույն «Գիւանի» Գ հատորում («Ղուկաս կաթողիկոս»), երբ Աղանյանցն արդեն պարզած է եղել այդ երկի հեղինակի անունը, վերնագրել է հետևյալ կերպ. «Խուրեանց, Պատմութիւն կաթողիկոսաց, Գրչագիր մատենադարանի Սրբոյ էջմիածնի»<sup>18</sup>:

Գեորգ Խուրովի այս գործը պարունակող ձեռագրին<sup>19</sup> մենք ուշադրութուն դարձրինք բոլորովին պատահաբար՝ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակի ցանկերում եղած մի վրիպակի շնորհիվ: Առաջին հանգամանքը, որի միջոցով հայտնի դարձավ անվերնագիր այդ երկի հեղինակի ինքնութունը, ձեռագրի 1բ—84ա էջերի ստորին լուսանցներում, դրադաշտից դուրս դրանցած 162 երկտող (կամ 81 քառատող) ունեցող երկարաշունչ ներբողն էր, որը, ինչպես «Գաւազանագրքի» համանման ներբողը, համառոտ ներկայացնում է ողջ հատորում պատմված դեպքերն ու դեմքերը: Այս ներբողն էլ, որ հեղինակի շափածո գործերի շարքում ամենածավալունն է, մյուս բոլոր երգերի ու տաղերի նման, ծայրակապ ունի. «Ի Գէորգ Մելքիսեղէկեան Խուրով Խաղբակեան հաշկաղն իշխանէ լալով սգալով ժողովեալ անպատեհ սրբազնագ»: Հետագայում, շարադրանքի ընթացքում, հեղինակը կամա թե ակամա, բազմիցս հայտնում է իր ով լինելը: Բայց քանի որ Խուրովը բավական խրթին և անընթեռնելի ձեռագիր ունենալով հանդերձ, սիրել է նաև շափաղանց շատ և յուրօրինակ համառոտագրութուններ գործածել, ուստի քարտագրման և ցուցակագրման ժամանակ շի պարզվել գործիս հեղինակը:

Մայր քարտը ձեռագիրը բնութագրում է իբրև «Հակաճառութիւն ընդդէմ կաթողիկոսութեան Հայոց էջմիածնայ: Քննադատութիւն գործոց աթոռակալ կաթողիկոսաց. Ղաղարու, Դաւթի-Դանիէլի և Եփրեմի: Մանրամասն նկարագիր էջմիածնայ կաթողիկոսաց և մատնութեանն և լափշտակութեանն նոցին: Կայ և մանրամասնութիւն ի մասին արտաքին յարաբերութեանց յիշեալ կաթողիկոսաց: Գրեալ անյայտ հեղինակէ»<sup>20</sup>: Իսկ ձեռագրացուցակը Խուրովի երկասիրութունը վերնագրել է «Յաղագս վարուց և գործոց կաթողիկոսաց էջմիածնայ (1737—1857 թթ.)» ձևով<sup>21</sup>: Քանի որ Խուրովի աշխատութեան վերջին մասում բավական լուսաբանված է ներսես Աշտարակեցի կաթողիկոսի վարդապետութեան շրջանի բուն գործունեութունը, ուստի թվացել է որ դա նրա կաթողիկոսութեան ժամանակվա իրադարձութունների նկարագրութունն է: Ուղղելով ձեռագրացուցակի այս թյուրիմացութունը կամ վրիպակը, կարելի է նրա առաջարկած վերնագիրն ընդունել անվերապահ

17 Նույն տեղում, էջ 46, ՃԻԶ:

18 Գիւան, Գ, Քիֆլիս, 1899, էջ Ի: Նույն անվանումը կրկնում է նաև առաջարանի երկ այլ մասում. կաթողիկոս ընտրվելու կարգի մասին (էջ 1Գ—1Դ), Ղուկաս Կարնեցու խոհմութեան մասին գրելիս (էջ ԽԳ) և 1795 թ. էջմիածնի 6 սալ կայքը Քիֆլիս տարած և սալերը Աղա-Մահմադ խանի զինվորներին զերի ընկած Մարտիրոս Անկոթ եպիսկոպոսի փրկագնման վերաբերող հատվածում (էջ Մէ): Մի խոսքով, Խուրովի երկի հիշատակման բոլոր դեպքերում Աղանյանցը շեշտում է, որ այն էջմիածնի մատենադարանի գրչագրերից մեկն է:

19 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 2766:

20 Մաշտոցի անվան Մատենադարան, № 2766 ձեռագրի քարտը:

21 Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատոր Ա, Երևան, 1965, էջ 371:

րեն, որովհետև այն ավելի ճիշտ է արտահայտում գործի բովանդակությունը. քան քարտի երկարաշունչ բացատրությունը կամ Գ. Աղանյանցի «Պատմութիւն կաթողիկոսացր»:

Չեռագիրն ունի 22,3×18 մեծության կապույտ թղթի 192 թերթ, կազմը ստվարաթուղթ է, միասուն գրադաշտով և հեղինակի ինքնագիր շղաղրով (ի միջի այլոց, Խուրովի մեզ հասած բոլոր ձեռագրերը ինքնագիր են): Ամենայն հավանականությամբ, գրվել է 1827—1830 թթ., Աստրախանում:

Հեղինակն իր աշխատությունը բաժանել է 131 գլխի, կամ, ինչպես ինքն է վերնագրել, պրակի: Ծավալի 13 տոկոսը, իր իսկ խոստովանությամբ, գրել է այլ աղբյուրներից քաղելով (հիմնականում Մ. Չամչյանից) կամ ձեռերից լսելով, իսկ իր հորեղբայր Սիմեոն Երևանցու շինարարական գործունեության նկարագրությունից սկսած, գործը դառնում է ականատեսի շարադրանք<sup>22</sup>: Այս հանգամանքը, անկասկած, մեծացնում է Խուրովի պատմագիտական երրորդ գործի արժեքը: Բոլորովին այլ աշխատություն է, տարբեր՝ ուսերեն գրքույկից, որը սրա շարադրանքում մի քանի անգամ հիշատակվում է, գրված է այլ ծրագրով և նպատակադրումով:

Ինչպես արդեն ասացինք, այս երկը էջմիածնի կաթողիկոսների վարքու բարքի, կենցաղավարության, գործունեության և, ըստ այդմ, նաև հայ եկեղեցու կենտրոն էջմիածնի պատմությունն է, բայց հատուկ ծրագրով չի գրվել. հեղինակը կյանքի վերջին շրջանում թղթին է հանձնել այն ամենը, ինչ հիշել է և արժանի համարել գրառելու և ինչ որ գրանցված չի եղել նրա ուսերեն գրքույկում: Ի դեպ, 1800 թ. այս կողմ նա իր պատմած դեպքերի մեծ մասի կենտրոնում է:

«Յաղագս վարուցն» սկսվում է «Սգալի զարթուցիչ» խորագիր ունեցող պրակով, որն ըստ էության մի ողբ է՝ քաղաքական բախումների, օտար բռնակալների հարստահարումների, դարասկզբին սկսված դավթի-գանիելյան պայքարի և էջմիածնի խեղճ ու ավեր փիճակի մասին: Ստորև մեջ ենք բերում աշխատության պրակներից մի քանիսի վերնագրերը. «Վանոն և կարգ կաթողիկոսի ընտրութեան, Յաղագս որպիսի ընտրութեան Ղազար կաթողիկոսի, Վասն սպանման նատր շահի և թագաւորելոյ Շահաուհի և Ատլշահի, Վասն մատնելոյ Ղազարու զիշխանսն Երևանու Հայոց, Վասն արքորելոյն զՂազար և նատուցանելոյն զՔիթիւր, Վասն կուրացուցանելոյ զԱտլշահ և թագաւորելոյ Իբրահիմայ և ելումն Ղազարու ի Սեանայ, Վասն առաջին նուիրակի աշխարհն Հնդկաց, Վասն վախճանմանն Ղազարու և կաթողիկոսութեան Մինասայ, Վասն որպիսութեան վարուց Յակոբայ կաթողիկոսի, Վասն ընտրութեան և օժման Սիմէօն կաթողիկոսի Երևանցու, Վասն ընծայամատոյց գոլոյ Սիմէօն հայրապետին կայսրուհւոյն և շահին, Վասն որպիսի բարեկարգելոյ նորա զկարգ ուսմանց աթոռայնոցն, Վասն աւերմանն Հերակլի զԵրևան և տառասպանաց Սիմէօն հայրապետի, Վասն վարուց Ղուկասու կաթողիկոսի, Վասն որբանութեան աշակերտաց մերոց և զի՞նչ ուսմանց նոցին, Վասն աւերման Թիֆլիզու և աւարմանն զարդուց Աթոռոյն, Վասն ծագման հակառակութեանց հակառակաթոռ կաթողիկոսացն Դանիէլի և Դաւթի և իսպառ նուազելոյ և (ո՞ գիտէ) որպէս նշմարի և վերջանալոյ ևս կաթողիկոսութեան Հայոց և լքեալ խանգարելոյ Աթոռոյն էջմիածնի, Վասն գողանալոյ Դաւթի զգե-

<sup>22</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, ձև. № 2766, էջ 25ա:

դարդն աստուածամուխ ընդ այլ դարդուց, Վասն ամենաողորմածարար շքնորհելոյ զկրամատ Դանիէլ կաթողիկոսին, Վասն գալստեանն Յիցիանովի և առարկայից Շարիֆ փաշայի, Վասն յԱրցախ զնալոյ կաթողիկոսին և մերկանալոյ ի կաթողիկոսութենէն, Վասն վերադառնալոյ Կարբեցւոյն ի վիճակացն Պօլսոյ և գերելոյն, Վասն պատասխան գրելոյ շահաւատային առ Ներսէսն»<sup>23</sup> և այլն:

Խուրովի նորահայտ երկր գրված է էջմիածնի և Հայաստանի կրած տառապանքները նկարագրելու միտումով, բայց նրա մեջ կան նաև հայ-ուսական հարաբերութիւնների պատմութիւնը վերաբերող ուշագրավ հատվածներ: Այսպես, հանգամանորեն պատմում է Սիմեոն Երևանցու՝ Եկատերինա Բ կայսրուհուն ուղարկած կոնդակի և սրբոց մատենքները կայսրուհուն մատուցելու հանգամանքների մասին: Ռուսաստանի կողմից Դանիէլի կաթողիկոսութիւնը հաստատելու իրողութիւնը պատմում է հետևյալ բաներով. «Յամենուստ կուսէ վիշտը և վտանգը և աղաղակը ազգի մերոյ բարձրացան. և յառանել տոշորմանց սրտից բողոքողացն ևս պատկառանք բարձան, առ ի համարձակիլ լնուլ զաշխարհամուտ սրահ ամենողորմ աթոռոյ մեծի և ինքնակալի կայսերն ամենայն Ռուսաց՝ օգոստոսափառագունի Ալէկսանդր Պաւլովիչին աղէքսարկու խնդրագրովք: Որ և նորին կայսերականի մեծութեան աստուածագութ ողորմածութեամբ զթացեալ յողորմելութիւն անտիրացեալ, անայցելու, անտէր, անտէրունչ ազգին, զիջեալ յաղերսանս մերայնոց, բազմաց, հետևողութեամբ մերայնոց բազմաց, հետևողութեամբ Եփրեմայ առաջնորդին Ռուսաստանու և մանաւանդ Մինաս Եղիազարեան ազգասէր իշխանին, յայց առնել բարեհաճեցաւ, շնորհելով զամենաբարձր զրամատն Դանիէլ պատրիարզին, զոր ստանալ ի Բայազէտ, բախտաւորեցաւ»<sup>24</sup>:

Խուրովի աշխատութիւն մեջ առանձին տեղ է հատկացված նաև 1803 թ. Յիցիանովի Հայաստան կատարած արշավանքի նկարագրութիւնը: Պատմելով հայերի խանդավառութիւն և ոգևորութիւն մասին, նա հատուկ ուշադրութիւն է հրավիրում ուսական զորքին ցույց տրված բազմակողմանի օգնութիւն վրա: Իսկ մանրամասներ իմանալ ցանկացողին ցույց է տալիս իր ուսերին զբրույկի համապատասխան մասը<sup>25</sup>: Պատմում է, որ այդ դեպքերի ժամանակ Դավիթ կաթողիկոսը էջմիածնի ունեցվածքի և գանձերի մեծ մասը բարձել էր 26 սայլի և տեղափոխում էր Բայազէտ. ինքն իմանալով այդ մասին, Երևանի սարդարի միջոցով խափանել է տալիս Դավթի մտադրութիւն իրագործումը, ապա մեծ ուրախութեամբ նկարագրում է գններալ Նեսվեանովի զորքերի կողմից այդ նույն գույքի Թիֆլիս տանելը<sup>26</sup>:

Ոգևորութեամբ է խոսում նաև Ալեքսանդր Ա-ին Եփրեմ կաթողիկոսի այցելութիւն, կաթողիկոսութիւն հաստատման հրովարտակը ստանալու, ստացած պարգևների և ընդունելութիւն ջերմութիւն ու փառահեղութիւն մասին<sup>27</sup>: Այստեղ շատ արժեքավոր հաղորդումներ կան նաև Պետերբուրգի հայ-

<sup>23</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, ձև. № 2766, էջ 3բ, 4բ, 7բ, 8ա, 8բ, 9բ, 10բ, 15բ, 19ա, 20բ, 22ա, 32բ, 40ա, 48ա, 51ա, 54ա, 62ա, 86բ, 99ա, 114բ, 185ա, 188ա, 190ա:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 99ա:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 114բ:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 133բ—136բ:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 172բ—174ա:

կական շրջանակների կյանքի և առօրյայի մասին. պատմվում է, ի թիվս այլոց, նաև Մարգար Խոջենցի, Հովակիմ Լազարյանի, Մանվել Կյումուշխանեցու մասին: Ուշագրավ է նաև կաթողիկոսի Պետերբուրգից Թիֆլիս կատարած ճամփորդության նկարագրությունը<sup>28</sup>:

Խուրովի այս գործում կարևոր հաղորդումներ կան դարասկզբի Երևանի հասարակական կյանքի, խաների բռնությունների, կաշառակերության և հարստահարումների մասին: Այսպես. մի գող մահմեդականի սպանվելու առիթով պարսիկ դատավորը հրապարակում է այսպիսի մի օրենք. մահմեդականի արյան դիմաց պետք է սպանել նրան սպանող քրիստոնյային՝ իր ողջ ընտանիքով, իսկ եթե ընտանիք չունենա՝ նրա յոթ մերձավոր ազգականի: Իսկ եթե ազգականներ էլ չունենա, մեղավորը «հատուցէ 700 թուման արծաթ դրամ, 30 սպիտակ ուղտ, որոց աչք և ծունկըն միայն սեաւ լիցին և ոչ այլ ուրէք, 5 թասպահ մարգարիտ, 40 թասպահ մարջան, 20 խալվար ցորեան, 5 խալվար բրինձ, 50 լիտր իւղ և այլ զանազան գոյք, որոց երկարելն աւելորդ վարկանեմ: Զայսոսիկ հատուցեալ և եօթն ամ ևս ծառայեալ, ազատ լիցի ի մահապարտութենէն»<sup>29</sup>:

Քննվող երկասիրության մեջ մինչև այժմ անհայտ բազմաթիվ կենսագրական տեղեկություններ կան նաև հեղինակի մասին:

Այժմ անդրադառնանք Աստրախանից 1829 թ. հուլիսի 14-ին Խուրովի՝ Լազարյաններին գրած նամակի մի ուշագրավ հաղորդմանը. «Ապա, ի 1820 թուոջ մինչ ի Ղլլար կառավարեաք զուսումնարանն կայսերական, էհաս մեզ բարձրագոյն հրաման՝ ընդ ենարալի ուրումն գնալ շրջիլ յութուտասան վանօրայս Հայաստանեայց, և գտեալ բերել զհին ձեռագիր պատմութիւնս թագաւորաց Հայոց և այլոց. խոստացեալ շնորհել զտարեկան պարէնս գերդաստանի մերոյ վեց հազար ուրլիս մեծամեծ պարգևօք, զոր ծախուցն քանակ ց70 հազար նկատէին և այլն: Եւ երկիցս ի հրաժարեալ կալնուլ խնդրելս մեր անկարելի գրեցաւ:

Ապա դրեկտորն ուսումնարանի ծանոյց գրաք Ռումեանցովին վասն գոյնոյ Գաւազանագրոցդ և այլոց հնգեաասան հատորոց մերոց նորոգ շարադրելոց, զոր և երկցս գրեալ խնդրեաց բերել առ ինքն, զի թարգմանեցուցեալ նորին Կայսերական մեծութեանն ընծայեսցէ և զայլսն տպագրեցուցեալ մեզ շնորհեսցէ»<sup>30</sup>:

Մինչև այժմ հայտնի էր, որ Ն. Պ. Ռումյանցեր, իր թանգարանի համար հայերեն ձեռագրեր հավաքելու նպատակով, ներսես Աշտարակեցուն խընդրել էր իրեն ուղարկել հայ պատմագիրների երկերի ձեռագրերի ընդօրինակություններ<sup>31</sup>: Խուրովի միջոցով հայոց վանքերից հին գրչագրեր հավաքելու մտադրություն ունեցած լինելու մասին առաջին անգամ իմանում ենք այս նամակից: Բայց առավել ուշագրավն այն է, որ, ըստ այս նամակի, «Գաւազանագրքից» և ուսերեն գրքույկից (արդեն տպագրված էր), «Երգարանից»

28 Նույն տեղում, էջ 174ա—178ա:

29 Նույն տեղում, էջ 60ա:

30 Մաշտոցի անվան Մատենադարանի գիվան, Լազարյանների թողոն, թղթ. 104, գործ 7, վավ. 51 և 132:

31 ՏԼՆ Օ. Ս. Եզանյան, Մատենադարանի ձեռագրական հավաքածուները—Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատոր Ա, կազմեցին՝ Օ. Եզանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, խմբագրությունը՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երևան, 1965, էջ 22—23:



և «Վասն վարուց և գործոց կաթողիկոսացն էջմիածնայ» երկասիրությունից բացի, Խուրովն ունեցել է ևս 13 աշխատություն, որոնց մասին նրան վերաբերող մասնագիտական գրականության մեջ տեղեկություն չկա:

Դրանցից հինգի տնունները մեզ հայտնի են.

1. «Վանոնք կուսանաց նշան օրհնելոյ, օրհնութիւն աշակերտաց արուեստաւորաց, նորոգ հիմնարկութեանց տանց կամ խանութից և այլն»<sup>32</sup>;

2. «Նախագգուշութիւն վասն Մոսկատկի»<sup>33</sup>;

3. «Վկայութիւնք Աստուածաշնչական և աստուածարանական Վասն Յղութեան և Մննդեան Քրիստոսի»<sup>34</sup>;

4. «Մեկնութիւն Պարզատումարի, յերկուս հատորս», 1814, Ի Ղզլար<sup>35</sup>;

5. «Բառարան Գէորգ Խուրով Խաղրակեանց Երևանցոյ, յերկուս հատորս»<sup>36</sup>;

Վերջին երկուսը 1903 թ. վառվել են Պետերբուրգում՝ Մկրտիչ Սանասարյանի ձեռագրական հավաքածուի մեջ, ուր կային նաև «Գաւազանագրքի» և «Երգարանի» մեկական ձեռագիր օրինակներ<sup>37</sup>:

Այս ամենը ցույց է տալիս, որ Երևանի, Քրիլիսիի, Մոզղոկի, Ղզլարի, Աստրախանի, Մոսկովայի և Լենինգրադի արխիվներում կարելի է գտնել Գեորգ Խուրովին վերաբերող փաստաթղթեր և, զուցե նաև, նրա մյուս դեռևս անհայտ գործերը: Դրանցից հետո միայն կարելի կլինի ամբողջական բնութայան ենթարկել Գեորգ Խուրովի գրական ժառանգությունը:

Ю. ВАРДАНЯН

## ВНОВЬ ОБНАРУЖЕННОЕ ПРОИЗВЕДЕНИЕ ГЕОРГА ХУБОВА (ХУБЯНЦ) КАК ПЕРВОИСТОЧНИК ПО ИСТОРИИ АРМЕНИИ И АРМЯНО-РУССКИХ ОТНОШЕНИЙ В XVIII—XIX ВВ.

(Резюме)

Георг Хубов (1764—1830), сын брата католикоса Симеона Ереванци (1763—1780), был видным общественно-политическим деятелем своего времени и одним из самых энергичных борцов за идею и дело освобождения Армении от турецко-персидского ига с помощью России. Борьба за восстановление независимости Армении была одним из

<sup>32</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 9262, 1829 թ., Աստրախան, տե՛ս Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատոր Բ, կազմեցին՝ Օ. Եզանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երևան, 1970, էջ 898:

<sup>33</sup> Երուսաղեմի Ս. Հակոբյանց ձեռ. № 2097, 1823 թ., Ղզլար, տե՛ս Մայր ցուցակ ձեռագրաց Արբոց Յակոբեանց, հատոր եօթներորդ, կազմեց՝ Նորայր արքեպս. Պողարեան, Երուսաղեմ, 1974, էջ 144:

<sup>34</sup> Երուսաղեմի Ս. Հակոբեանց ձեռ. № 2108, նույն տեղում, էջ 153:

<sup>35</sup> Յուցակ հայերէն ձեռագրաց Մկրտիչ Սանասարեան, կազմեց՝ Մեսրոպ Մագիստրոս Տէր-Մովսիսեան, խմբագրեց և ցանկերը կազմեց՝ Յ. Զ. Վարդանեան, ձեռ. 113 և 114 (տպագրվում է):

<sup>36</sup> Նույն տեղում, ձեռ. № 117:

<sup>37</sup> Նույն տեղում, ձեռ. №№ 118 (1822 թ., Ղզլար) և 116:

основных направлений его научно-педагогической и общественной деятельности в Эчмиадзине, Ереване, Тифлисе, Моздоке, Санкт-Петербурге, Москве, Кизляре и Астрахани. До сих пор из литературного наследия Хубова были известны: изданная в русском переводе книга «Описание достопамятных происшествий в Армении... от патриаршества Симеонова (1778) до 1809 г.... С.-Петербург 1811», сборник «Песенник (для) поющих юношей и правоучение (для) неопытных влюбленных» и произведение «Хронография армянского народа». В начале данной статьи дается краткий обзор трудов филологов-арменоведов Г. Аганянца, Л. Меликсет-Бека, А. Кюртяна, П. Акопяна, посвященных жизни и известным произведениям Г. Хубова.

В рукописи Матенадарана им. Маштоца № 2766 автором статьи выявлено новое историографическое сочинение Г. Хубова, которое в конце прошлого столетия было использовано в нескольких томах труда Г. Аганянца «Архив истории Армении»; впоследствии, однако, в силу каких-то обстоятельств оно не привлекло к себе внимания и было предано забвению. Следуя каталогу рукописей Матенадарана им. Маштоца, автор статьи озаглавил это новое сочинение: «О нравах и деяниях католиков Эчмиадзинских (1737—1827)». Указаны несколько содержащихся в этом сочинении сведений, важных для изучения вопросов истории армяно-русских отношений в XVIII—XIX вв., Эчмиадзина и его католиков, Еревана, армянских общин в России и других.

Благодаря одному письму Г. Хубова, хранящемуся в Матенадаране им. Маштоца, выясняется, что кроме известных ныне произведений у него было еще 13 работ. Отмечая названия и места хранения пяти из них, автор выражает в заключение надежду, что остальные произведения Хубова могут быть обнаружены в архивных учреждениях Еревана, Тбилиси, Моздока, Кизляра, Астрахани, Москвы и Ленинграда.

Y. VARDANIAN

L'OEUVRE NOUVELLEMENT DÉCOUVERTE DE GEORGES  
KHOUBOV (KHOUBIANTZ) COMME SOURCE DE L'HISTOIRE  
D'ARMÉNIE ET DES RELATIONS ARMÉNO-RUSSES DES  
XVIII<sup>e</sup> ET XIX<sup>e</sup> SIÈCLES

(R é s u m é)

Georges Khoubov (1764—1830), fils du frère du catholicos Siméon Erévantsi (1763—1780), a été l'un des hommes politiques éminents de son époque et l'un des plus énergiques lutteurs pour l'idée et la cause de la libération de l'Arménie du joug turco-persan avec l'aide de la Russie. La lutte pour la restauration de l'indépendance de l'Arménie a été l'une des directions principales de son activité scientifique, pédagogique et sociale à Etchmiadzine, Erévan, Tiflis, Mozdok, Saint-

Pétersbourg, Moscou, Kizlar et Astrakan. De l'héritage littéraire de Khoubov on connaissait jusqu'à présent: le livre „Descriptions des événements notables de l'Arménie... du patriarcat de Siméon (1778) jusqu'à 1809... Saint—Pétersbourg 1811“, le recueil „Chansonnier pour les enfants et morale pour les amoureux inexpérimentés“ et l'ouvrage intitulé „Chronographie du peuple arménien“. Au début de l'article l'auteur donne un bref résumé des ouvrages des philologues arménistes G. Aghāniantz, L. Mélikset-Bek, A. Kurtian et P. Hacopian consacrés à la vie et aux oeuvres connues de G. Khoubov.

Dans le manuscrit № 2766 du Maténadaran Machtotz l'auteur de l'article a découvert un nouvel ouvrage historique de G. Khoubov que G. Aghaniantz a utilisé à la fin du siècle dernier dans plusieurs tomes de ses „Archives de l'histoire d'Arménie“; cependant, plus tard, par suite de certaines circonstances, cet ouvrage n'a plus attiré l'attention et a été oublié. Suivant le catalogue des manuscrits du Maténadaran Machtotz l'auteur de l'article a intitulé ce nouvel ouvrage: „Sur les moeurs et les faits des catholicos d'Etchmiadzine (1737—1827)“. Il cite certains renseignements contenus dans cette oeuvre et présentant de l'importance pour l'étude des questions de l'histoire des relations arméno-russes des XVIII<sup>e</sup>—XIX<sup>e</sup> siècles, de l'histoire d'Etchmiadzine et de ses catholicos, d'Erévan, des communautés arméniennes de la Russie, etc.

D'une lettre de G. Khoubov conservée au Maténadaran Machtotz nous apprenons qu'outre les ouvrages connus à présent il en a eu encore 13 autres. Mentionnant le titre et le lieu de conservation de cinq d'entre eux, l'auteur exprime l'espoir que les oeuvres de Khoubov puissent être découvertes dans les archives d'Erévan, de Tiflis, Mozdok, Kizlar, Astrakan, Moscou ou Léninegrad.